ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ 2018Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժինը 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում հետևել է մարզի ավագանիների և համայնքի ղեկավարի որոշումների համապատասխանությանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 370 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի, աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, տեղական տուրքեր և վճարներ սահմանելուն, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն և ներհամայնքային այլ խնդիրների:Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համայնք՝ համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան: Կիսամյակի ընթացքում տրվել են բանավոր խորհրդատվություններ՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցներին: Բարձրացված հարցերը վերաբերվել են անշարժ գույքի սեփականության վկայականի ձեռքբերման, սեփականության իրավունքի գրանցման, ժառանգության ընդունման, սոցիալական անապահովության նպաստ ստանալու, իրավաբանական փաստի ճանաչման և այլ հարցերի: Քաղաքացիներին պատասխանվել է օրենսդրության պահանջներից ելնելով:

Ամենամյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

Բաժնի պետը, որպես աուդիտի կոմիտեի անդամ մասնակցել է ներքին աուդիտի բաժնի կողմից մարզի հանրակրթական հաստատություններում, առողջապահական հիմնարկներում և մարզպետարանի աշխատակազմում իրականացված աուդիտի արդյունքների քննարկմանը՝ աուդիտի կոմիտեի նիստերի ընթացքում ներկայացրել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

Մասնակցել ենք Վայք համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողությանը:

Մարզի ավագանիների որոշումները բաժնի կողմից տեղադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում մասնակցել ենք մարզպետարանի և Ջառիթափի համայնքապետարանի միջև հաշտության համաձայնագրի կնքմանը:

Պատասխանվել են տարբեր պետական մարմինների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ / Ն.ՄԱՂԱՔՅԱՆ